ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին» համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

Հաշվի առնելով, որ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը հետաձգվում է, ՀՀ կառավարությունը 2012 թվականի ապրիլի 19-ին ընդունել է թիվ 461-Ն որոշումը՝ «Հայկական ԱԷԿ» փակ բաժնետիրական ընկերության երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը երկարացնելու մասին»:

2014 թվականի մարտի 27-ին ՀՀ կառավարության թ. 12 նիստի 11-րդ արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրին:

Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքները կազմակերպելու, իրավասու մարմինների և պատասխանատու կազմակերպությունների միջև իրավական հարաբերությունները համակարգելու համար ՌԴ-ի կողմից առաջարկվել է ստորագրել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին» համաձայնագիրը:

Համաձայնագրով Հայկական կողմից իրավասու մարմին է հանդիսանում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ՌԴ-ի կողմից՝ «Ռոսատոմ» ատոմային էներգիայի պետական կորպորացիան:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 19-ի թիվ 511-Ա որոշման 2.2.8.1.կետի դրույթները՝ «Շարունակական աշխատանքների իրականացում՝ Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացման և գործող էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ուղղությամբ» և ՀՀ կառավարության 2014թ հուլիսի 31-ի թիվ 836-Ն «ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թթ. միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման հավելվածի 1բ. կետի «ՀԱԷԿ-ի գործող ատոմային էներգաբլոկի աշխատանքային ռեսուրսի երկարացում 10 տարով» դրույթների իրականացման կարևորությունը, և նկատի ունենալով ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, նպատակահարմար ենք գտնում ՌԴ-ի հետ ստորագրել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին» համաձայնագիրը:

ՆԱԽԱՐԱՐ ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ